Արձանագրություն N 3

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար ավտոմեքենաների անիվների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/6-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» ապրիլի 2016թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

– **Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար

հանձնաժողովի անդամներ՝

Էդգար Տոնականյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Մելքոնյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

– **Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ Հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.

1.1 «ԴԱՐՖ» ՍՊԸ-ն և «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են իրենց հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, հետևաբար նշված մասնակիցների հայտերը ևս գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1. **1-ին, 2-րդ և 5-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ –ին:

2.2. **3-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՀՈՒՅՍ-ՄՈՏՈՐ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ –ին:

2.3. **4-րդ և 7-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ԴԱՐՖ» ՍՊԸ –ին,

4-րդ չափաբաժնի մասով ներկայացված գնային այլ առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները,

7-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին:

2.4. **6-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից՝ «ԴԱՐՖ» ՍՊԸ –ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի քարտուղարին.

3.1 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը:

3.2 Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի ապրիլի 13-ը ներառյալ, ներկայացնել Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի <<զ>> պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը:

3.3. Հաշվի առնելով, որ «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ն ՝ 1-ն, 2-րդ և 5-րդ չափաբաժինների մասով, «ՀՈՒՅՍ-ՄՈՏՈՐ» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով ներկայացրել են չհիմնավորված ցածր գնային առաջարկ (գնային առաջարկը համարվում է չհիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից)՝ ներկայացնել Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված փաստաթղթային հիմնավորումներ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի ապրիլի 15-ին, ժամը՝ 14:30-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝

Կարեն Համբարձումյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Կարեն Մելքոնյան

Անահիտ Ավագյան

Սարգիս Արմենակյան

Քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան